

## *ԵՆՈՔ ՌՈՒԲԵՆԻ ԱԶԱՐՅԱՆ*

Ծնվել է 1965թ. մայիսի 31-ին Երևանում:

1972-1982թթ. սովորել է Երևանի Էրեբունու շրջանի թիվ 45 միջնակարգ դպրոցում:

1983-1985թթ. ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում:

1993թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:

1999թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 2003թ.՝ դոկտորական ատենախոսություններ:



Իրավաբանական գիտությունների դոկտոր, գիտական 6 մենագրությունների և 100-ից ավելի գիտական ու հրապարակախոսական հոդվածների հեղինակ է: Ունի իրավաբանի մասնագիտական աշխատանքային 20 տարվա փորձ:

1989-1997թթ. աշխատել է պետական մի շարք հիմնարկ-ձեռնարկություններում որպես իրավախորհրդատու:

1997թ. ընդունվել է ՀՀ փաստաբանների կոլեգիա և նշանակվել Զանաքեռ-Չեյթուն փաստաբանական գրասենյակի տնօրեն:

1996-2003թթ. դասախոսել է տարբեր բուհերում, այդ թվում՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտում:

2003թ. եղել է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտի քրեական և քրեակատարողական ամբիոնի վարիչ:

1999-2005թթ. եղել է ՀՀ փաստաբանների միության ուսումնական կենտրոնի տնօրենը:

1999-2005թթ. ՀՀ փաստաբանների միության ընդհանուր ժողովի կողմից ընտրվել և վերընտրվել է միության խորհրդի անդամ և խորհրդի կազմից նշանակվել ՀՀ փաստաբանների միության նախագահի տեղակալ:

2006 թ.-ից <<Հայաստանի փաստաբանների միավորում>> կազմակերպության հիմնադիր նախագահն է:

2006-2008թթ. եղել է ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի նախագահ:

25.11.2008թ. նշանակվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության <<Ստանդարտների ազգային ինստիտուտ>> ՓԲԸ-ի տնօրեն:

2009թ. ընտրվել է Երևան քաղաքի ավագանու անդամ, Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ: